

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Լարիսա Ալավերդյանի, Մոյրապա Սաֆարյանի, Անահիտ Բախշյանի, Արմեն Մարտիրոսյանի, Զարուհի Փոստանջյանի և Րաֆֆի Հովհաննիսյանի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծի ընդունումը նախատեսում է շահառուների, նրանց արտոնությունների տեսակների և չափերի ընդլայնում, որն էլ իր հերթին կհանգեցնի լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտության:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ բռնադատվածների առաջին հերթի ժառանգների թիվը կազմում է շուրջ 8-9 հազար, իսկ երկրորդ հերթի ժառանգների վերաբերյալ տվյալները բացակայում են:

Բռնադատվածների ճնշող մեծամասնությունը 1996-2009 թվականների ընթացքում ստացել են օրենքով նախատեսված միանվագ դրամական փոխհատուցումը և նախագծի ընդունման դեպքում դրամական փոխհատուցման չափի բարձրացմամբ պայմանավորված անհավասար պայմաններ կատեղծվեն նախկինում դրամական փոխհատուցում ստացած բռնադատվածների և այն անձանց միջև, ովքեր նախագծի ընդունումից հետո կդիմեն միանվագ դրամական փոխհատուցում ստանալու համար:

Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի հոդվածների միջև առկա է հակասություն: Սակայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը բռնադատվածների երաշխիքների խնդիրների լուծման հետ կապված հարաբերությունների կարգավորում չի նախատեսում: Համաձայն օրենսգրքի 66-րդ հոդվածի 11-րդ մասի՝ արդարացվածի մահվան կամ անգործության դեպքում պահանջի իրավունքը նույն հոդվածի 4-րդ, 5-րդ, 9-րդ մասերով անցնում է նրա մոտակա հերթի ժառանգներին, այսինքն նշյալ հոդվածի դրույթները վերաբերում են արդարացվածին և չեն տարածվում բռնադատվածների վրա, հետևապես խոսք չի կարող լինել «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանապետության օրենքի 13-րդ հոդվածի հետ հակասության մասին: Բռնադատվածների երաշխիքների խնդիրների լուծման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանապետության օրենքով:

Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունն ուղղված է բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց որոշակի սոցիալական ու ֆինանսական աջակցություն տրամադրելուն՝ որպես բարոյական փոխհատուցում, այլ ոչ թե բռնադատվածների ժառանգների համար նոր արտոնություններ սահմանելուն:

Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջները՝

1) նախագծի վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով.

2) 2-րդ հոդվածում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Մխիթար Մնացականյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-845-12.03.2010-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Բռնադատվածների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Բռնադատվածների մասին Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հունիսի 14-ի ՀՕ-106 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում «տասներկուսպատիկից բառը փոխարինել «երկու հարյուր քառասնապատիկից բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 13. Մահապատժի դատապարտված, ինչպես նաև ազատագրված և ձեռք քաշված պատիժը կրելիս կամ այդ պատիժը կրելուց հետո մահացած բռնադատվածի առաջին հերթի ժառանգներն օգտվում են սույն օրենքի 6-րդ, 7-րդ եւ 12-րդ հոդվածներով նախատեսված արտոնություններից: Առաջին հերթի ժառանգների բացակայության, նրանց՝ ժառանգությունից մեկուսացնելու, նրանց կողմից ժառանգությունը չընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու դեպքում սույն օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված արտոնությունից օգտվելու իրավունքն անցնում է բռնադատվածի երկրորդ հերթի ժառանգներին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲՈՒՆԱԴԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման առարկան.

Օրենքի նախագծի կարգավորման առարկան բռնադատվածների եւ նրանց առաջին կամ երկրորդ հերթի ժառանգների փոխհատուցման իրավունքի հետ առնչվող փոխհարաբերությունն է:

2. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը).

Բռնադատվածների, ինչպես նաեւ նրանց ժառանգների իրավունքների պաշտպանությունը մնում է Հայաստանի Հանրապետության կարեւորագույն սոցիալական խնդիրների շարքում:

Ուստի սույն նախագծի ընդունումն անհրաժեշտ է հետեւյալ նկատառումներով.

ա) սոցիալական արդարության ապահովում եւ արդարացված բռնադատվածների եւ նրանց ժառանգների իրավունքների վերականգնում,

բ) **«Իրավական ակտերի մասին ԷՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի, այն է՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքների՝ օրենսգրքերին համապատասխանելու պահանջի ապահովում, հետեւաբար «Բռնադատվածների մասին ԷՀ օրենքի եւ Քրեական դատավարության օրենսգրքի հոդվածների միջեւ առկա հակասության շտկում,**

գ) օրենքներում տարբերությունների եւ տարաձայնությունների վերացում:

2.2 Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը եւ առկա խնդիրները.

«Բռնադատվածների մասին ԷՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ մահապատժի դատապարտված, ինչպես նաեւ ազատազրկման ձեռով պատիժը կրելիս կամ այդ պատիժը կրելուց հետո մահացած բռնադատվածի առաջին հերթի ժառանգներն օգտվում են սույն օրենքի 6-րդ եւ 7-րդ հոդվածներով նախատեսված արտոնություններից: Նշված հոդվածի բովանդակությունից բխում է, որ բռնադատվածների առաջին հերթի ժառանգները չեն օգտվում Օրենքի 12-րդ հոդվածով սահմանված՝ բռնադատվածի սեփականությունը հանդիսացող բռնագրավված գույքի, նրա կողմից վճարված տուգանքի կամ պատիժը կրելու ընթացքում չստացած աշխատավարձի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից: Նշված նորմը հակասում է **ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 11-րդ մասին**, ըստ որի արդարացվածի մահվան կամ անգործունակության դեպքում պահանջի իրավունքը սույն հոդվածի 4-րդ, 5-րդ եւ 9-րդ մասերով անցնում է նրա ժառանգներին: Ըստ Քրեական դատավարության օրենսգրքի նշված հոդվածի՝ արդարացվածի մոտակա հերթի ժառանգները որպես հատուցում իրավունք ունեն ստանալ արդարացվածի աշխատավարձը, թոշակը, նպաստները կամ այլ եկամուտներ, որոնցից նա գրկվել է գույքի բռնագրավմամբ՝ այն պետության եկամուտ դարձնելու, առգրավելու կամ գույքի վրա կալանք դնելու հետեւանքով: Ուստի **«Բռնադատվածների մասին օրենքի ու Քրեական դատավարության օրենսգրքի** նշյալ հոդվածների միջեւ առկա է անհամապատասխանություն:

2.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Վերոնշյալ անհամապատասխանությունը վերացնելու, ինչպես նաեւ բռնադատվածների ժառանգների իրավունքներն ամրագրելու համար սույն նախագծով առաջարկվում է **«Բռնադատվածների մասին ԷՀ օրենքի 13-րդ հոդվածում ոչ միայն 6-րդ եւ 7-րդ (ինչպես գործող օրենքում է), այլ նաեւ 12-րդ հոդվածներով սահմանված փոխհատուցման իրավունքից օգտվելու հնարավորություն նախատեսել**

բռնադատվածների առաջին հերթի ժառանգների համար, իսկ առաջին հերթի ժառանգների բացակայության, նրանց՝ ժառանգությունից մեկուսացնելու, նրանց կողմից ժառանգությունը չընդունելու կամ ժառանգությունից հրաժարվելու դեպքում փոխհատուցման իրավունքից օգտվելու հնարավորություն նախատեսել երկրորդ հերթի ժառանգների համար: Միաժամանակ, **«Բռնադատվածների մասին»** գործող օրենքով բռնադատվածներին տրվող միանվագ դրամական փոխհատուցման չափը կազմում է տասներկու հազար ՀՀ դրամ: Սույն նախագծով առաջարկվում է Օրենքի 12-րդ հոդվածի «տասներկուսպատիկի բառը փոխարինել «երկու հարյուր քառասնապատիկի բառերով՝ բռնադատվածների, իսկ նրանց բացակայության պարագայում նաև նրանց առաջին կամ երկրորդ հերթի ժառանգների համար միանվագ դրամական փոխհատուցումը սահմանելով երկու հարյուր քառասուն հազար ՀՀ դրամ: Այդ գումարը ծայրահեղ աղքատության շեմի միջին հաշվարկային ցուցանիշն է բազմապատկած մեկ տարվա կտրվածքով:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Սույն նախագծի կիրառման արդյունքում

ա) օրենքով կկարգավորվի բռնատաղվածների եւ նրանց առաջին կամ երկրորդ հերթի ժառանգների միանվագ դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը, այդ փոխհատուցման չափը կհամապատասխանեցվի ծայրահեղ աղքատության շեմին եւ պետության կողմից նման պատասխանատվության ստանձնման արդյունքում սոցիալ-բարոյահոգեբանական տեսանկյունից կվերկանգնվի սոցիալական արդարությունը,

բ) կվերացվեն **«Բռնադատվածների մասին»** օրենքի եւ Քրեական դատավարության օրենսգրքի միջեւ առկա հակասությունները եւ

գ) կհստակեցվեն իրավական եւ իրավակիրառական մեխանիզմները: